

որ Ապահունեաց նախարարութեան կը վերաբերէին, եպիսկոպոսը քարկոծողները սրով սպաննեցին և ազատելով Սադը փախտան իրենց երկիրը: Ապահունիք կը բնակէին Վանայ ծովին առեմտեան կողմը, Սադը եպիսկոպոս ինքն ալ կը վերաբերէր ազնուական տոհմի մը: Ապահունիք խնամեցած Սադը եպս. ի տանանոր ի յիշատակ կը շինեն վանք մը Սելովամի մօտ: Անաստասի Յուլիանի մէջ Ապահունեաց նախարարութեան անունով վանք չէ յիշատակուած, և անկարելի է որ նոյն վաղեմի նախարարութիւնը անմասն մնար Ս. Տեղերուն բարեպաշտական յիշատակներէն. մենք հաւանական կը նկատենք թէ Սադը անունով շինուած Սելովամի վանքը կը պատկանի Ապահունեաց նախարարութեան:

3. — Մովսէս փանֆ. 4. — Չորրորդ փանֆ Սիւնեաց ի Չորե Յովսափասոս: Երուսաղէմի արեւելքը կը գտնուէին Սիւնեաց միւս երեք վանքերը, իսկ Չորրորդը Սելովամի մօտ: Այս բոլոր վանքերը կործանուած են Պարսից և Արաբաց արշաւանքներուն ժամանակ և այլևս չեն վերաշինուած. բայց միջին դարուն, ըստ վկայութեան արաբացի պատմիչներուն, որքան որ Սելովամի շրջականները այլևս գոյութիւն չունէին բիւզանդական շրջանի կրօնական կեանքը ու վանականութիւնը, սակայն և այնպէս բոլորովին չէին ջնջուած կրօնաւորական միաբանութիւնները: Թ. դարու Commemoratorium Casis Dei կոչուած պաշտօնական յիշատակարանը արձանագրած է Յովսափասոս մէջ կոյսեր, մեկնակեացներ և մասուններ: 985ին Մուզատտէսի կը յիշէ թէ Սելովամի մէջ կային պարտէզներ, այգիներ և եկեղեցիներ, անպատականներ ու գերեզմաններ, և կը շեշտէ թէ բոլորովին չէ վերջացած կրօնաւորական կեանքը (Guy le Strange, Palestine under the Moslems, էջ 219): Մինչև ժ. դար տեսած է Սելովամի և շրջակայից վանական կեանքը, այնպէս որ նոյն տեսն ևս պակաս չէին հայ, յոյն և ասորի կրօնաւորներ նոյն տեղոյն մէջ, ինչպէս որ կը վկայեն յիշատակարանք (R. B. 1919. էջ 493-495): Ուստի կրնանք ըսել թէ այս կողմերու հայ վանականութիւնը, հուրի եւ սուրի մկրտութիւնը բազմիցս ընդունելէ վերջ, դարձեալ կարողացած է մնալ այս կողմերը, մինչև Խաչակրաց ժամանակ: Այս կերպով ժ. դարը կը փակէ Սելովամի կրօնաւորական կեանքը, ու բացի աւագանին ջրոց պարզեաներէն, կը տիրեն հոն ամայութիւն և կրօնական կեանքին բարգաւաճ վիճակի մը մնացորդները: